ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

12.05.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ղարսայանը, Մ.Նահապետյանը, Վ.Հովհաննիսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Կ.Շեկոյանը, Գ.Բաղդասարյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Բեջանյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետն անդրադարձ կատարեց տրված հանձնարարականների կատարմանը և առաջարկեց մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Կ.Շեկոյանին՝ ներկայացնել իր դատողությունները և առաջարկությունները մարզպետի աշխատակազմի ոլորտային ստորաբաժանումների ղեկավարների հետ ըստ տրված հանձնարարականի՝ ոլորտի զարգացման տեսլականների մշակման աշխատանքային քննարկումների արդյունքների վերաբերյալ:

2. Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Կ.Շեկոյանը ներկայացրեց ոլորտային ստորաբաժանումների հետ քննարկումների արդյունքներով, մարզում մի շարք ուղղություններով իրականացվելիք ծրագրերը, աշխատանքները՝ այդ ոլորտների զարգացմանը և ընդհանուր առմամբ մարզի առաջընթացին նպաստելու նպատակով՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ՝ երկարաժամկետ կտրվածքով, նշելով որ այդ և այլ նմանատիպ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտություն է համարում տեղեկատվության հավաքագրումը, քարտեզագրումը, վերլուծումը, ռիսկերի և ֆինանսական միջոցների գնահատումը, դրանց իրագործման ժամկետները և արդյունավետության աստիճանը:

3. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ՝ Մ.Դալլաքյանը, Կ.Ադամյանը, Գ.Բաղդասարյանը, Ա. Թումանյանը, Է.Հախվերդյանը ներկայացրեցին իրենց տեսակետները և առաջարկները քննարկվող հարցի վերաբերյալ:

Ներկայացված դատողությունների ու առաջարկությունների վերաբերյալ իր տեսակետը հայտնեց նաև Լոռու մարզպետը, ընդգծեց, որ ներկայացված բոլոր ծրագրերը պետք է

միտված լինեն մարզի զարգացմանը, կարևորելով հետևողական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը, նշեց, որ այսօր եզակի հնարավորություն է տրված՝ շրջադարձային և հիմնավոր, իրատեսական փոփոխություններ բերելու մարզ և բոլորի ներդրումն ունենալ մարզի զարգացման առաջընթացի գործում, ու բոլորը պարտավոր են պատվով իրականացնել այդ առաքելությունը, իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է մտածելակերպի փոփոխություն, արդյունավետ աշխատանք և պատասխանատվության բարձր զգացում:

Վերոգրյալի առիթով մարզպետը ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարեց կրկին անգամ համատեղ քննարկել դատողություններն ու առաջարկությունները, և 10-օրյա ժամկետում ներկայացնել վերջնական երկարաժամկետ և իրագործելի ծրագրային առաջարկներ:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-05-13 14:45:09 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99